4.1 «Էկոմիքս» ՍՊԸ գնային առաջարկը 1,2,3,4,5,6,7,8,9 չափաբաժիններով, ԱՁ Հայկ Գալստյանի գնային առաջարկը 1 չափաբաժնով, «Էքստերիեր Գրուպ» ՍՊԸ գնային առաջարկը 4 չափաբաժնով գերազանցում են այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները:

Հանձնաժողովի որոշումները

1. Ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /Կարգ/ 40 կետի 5-րդ ենթակետի բ/ պարբերությամբ՝ հանձնաժողովը որոշեց նիստը կասեցնել երկու աշխատանքային օրով մինչև ս.թ. օգոստոսի 21-ը ժամը 15.00-ը: «Էկոմիքս», «Էքստերիեր Գրուպ» ՍՊ ընկերություններին և ԱՁ Հայկ Գալստյանին սույն արձանագրության 4.1 կետով նշված չափաբաժիններով հրավիրել գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների /կցվում է/:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0

Ի գիտություն

Սահմանված ժամկետում մասնակիցների կողմից վերանայված գնային առաջարկներ չեն ներկայացվել. գներ չեն նվազեցվել:

2. Ղեկավարվելով Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի «զ» պարբերությամբ և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի Հոդված 37-ի մաս 1-ի կետ 1-ը՝ Ընթացակարգը հայտարարել չկայացած 1,2,3,4,5,6,7,8,9 չափաբաժիններով և հաստատել չկայացած ընթացակարգի մասին հայտարարության տեքստը /կցվում է/:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0

3. Ղեկավարվելով Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետով՝ հանձնաժողովը որոշեց.

ա) առաջին տեղը զբաղեցրած մասնակիցներ ճանաչել.

- «Լուվա» ՍՊԸ՝ 10,11,18 չափաբաժիններով
- «Էկոմիքս» ՍՊԸ՝ 12,13,14,15,16 չափաբաժիններով
- «Հայկ Գալստյան» ԱՁ՝ 17-րդ չափաբաժնով

բ) երկրորդ տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել «Էկոմիքս» ՍՊԸ՝ 10,11 չափաբաժիններով

գ)երրորդ տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել «Էքստերիեր Գրուպ» ՍՊԸ՝ 10,11 չափաբաժիններով

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0

4. Ղեկավարվելով Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով՝ հանձնաժողովը որոշեց առաջին տեղը զբաղեցրած մասնակիցներից պահանջել սույն արձանագրության 3 կետի ա) ենթակետով նշված չափաբաժիններով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ սահմանված՝ առաջարկվող ապրանքների անվանումները և տեխնիկական բնութագրերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0

5. Կարգի 43-րդ կետի 3 ենթակետի համաձայն՝ հանձնաժողովը որոշեց ՀՀ ԿԱ Պետական եկամուտների կոմիտեից կատարել հարցում՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների հարկային պարտավորությունների վերաբերյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0

6. Գնահատման նիստը հրավիրել ս.թ. օգոստոսի 25-ին, ժամը 12.00-ին, ՀՀ, ք. Երևան, Նորք, Հովսեփյան 95 հասցեով

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0

Հանձնաժողովի

նախագահ՝ _____ Հ. Սարոյան

անդամներ՝ _____ Դ. Հարությունյան

_____ Ա. Հովհաննիսյան

_____ Լ. Կարասակալյան

քարտուղար՝ _____ Մ. Նիկոլյան